ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հարկերի մասին» հհ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-107 օրենքի 28.2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 28.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դրոշմավորման ենթակա չդրոշմավորված, ինչպես նաեւ ապօրինի ձեռք բերված դրոշմանիշներով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների եւ սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված ապօրինի գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների իրացման դեպքերում այդ ապրանքները ենթակա են ոչնչացման (դրանց՝ այդ ապրանքային տեսքով շրջանառությունից դուրս բերման) հարկային մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի մարտի 1-ից: